Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԾԱՂԿՈՑ - ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐՈՒ

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ԼԻՐԱՆԱՆԱՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

ԿՈՂՄԷ

ՊԷՅՐՈՒԹ
1930
ՏՊԱՐԱՆ ԱԶԱՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԾԱՂԿՈՑ - ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐՈՒ

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

ԿՈՂՄԷ

ՄԱՏԵՆԱՏԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ Գ. ՊՈՂԱՐԵԱՆԻ
ԱՆՎԱՆ - ՀԱՅԿԱԿԱՆ - ՊՏՐՈՒԹ
ԳԻՐ ԺԱ ԹԻՒ 81

ՊԷՅՐՈՒԹ
1930
ՏՊԱՐԱՆ ԱԶԱՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԾԱՂԿՈՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

(Ecole Maternelle, Ecole Enfantine)

(3—6 տարեկան տղայոց համար)

Ծաղկոց-Մանկապարտէզի նպատակն է տալ դըպրոցական տարիքին չհասած 3—6 տարեկան տղայոց այն բոլոր խնամքը, զորս կը պահանջէ անոնց մարմնական, մտաւորական և բարոյական զարգացումը։ (Ծաղկոց-Մանկապարտէզներու կազմակերպութեան, ղեկավարներու և այլնի համար տե՛ս մասնաւոր «Հրահանգ Ծաղկոց-Մանկապարտէզներու մասին»)։

1. Ծաղկոց Մանկապարտէզի բաժանումները պէտք է յարմարցնել տեղական պայմաններուն, անհրաժեշտ է սակայն 3—4 և 5—6 տարեկաններու համար մասնաւոր դասարաններ կազմել։

2. Ծաղկոց-Մանկապարտէզը իսկապէս դեռ դըպրոց չէ, ան կը կատարէ միայն մտաւորական լուրջ մօտ մը դերը. այս պատճառով անհրաժեշտ է հոն մեծ կարևորութիւն տալ տղայոց մարմնական առողջութեան, անոնց հինգ զգայարաններու գործածութեան և զարգացման, անոնց մարմնամասերու ապահով շարժումներուն և ճարտարութեան, բարոյական և կրօնական նախնական ըմբռնումներու մշակման և ապա մտաւորական տարրական ծանօթութեանց։ (Տե՛ս «Հրահանգ Ծաղկոց-Մանկապարտէզներու մասին»։)

3. Ծաղկոց-Մանկապարտէզներու ուսուցման նիւթերը հետևեալներն են, որոնք ամենապարզ ու

տարրականէն կսկսին և հետզհետէ դէպի աւելի բարդը կ՚ընթանան։

Ա. Խաղեր, տարրական և աստիճանաբար զարգացող մարզանք, երգախառն մարզանք։

Բ. Ձեռական վարժութիւնք։

Գ. Բարոյական կրթական նախնական տարրք։

Դ. Ամենապարզ ու սովորական ծանօթութիւններ։

Ե. Լեզուական վարժութիւնք, հեքեաթներ և ամենապարզ պատմուածք։

Զ. Գծագրութեան, հաշուի, գրութեան և ընթերցանութեան նախնական տարրք (վերջին երկուքը 5 տարեկանէն ետքը)։

Վերոյիշեալ ծրագիրը կարելի է գործադրել հետեւեալ ձեւով, 3—6 տարեկան տղաքը բաժնելով երկու խումբի և տեղաւորելով զանոնք Ծաղկոցի (Ecole Maternelle) և Մանկապարտէզի (EcoleEnfantine) մէջ։

ԾԱՂԿՈՑ

(3—4 տարեկան տղայոց համար)

ԽԱՂ ԵՒ ԵՐԳ

ԱԶԱՏ ԵՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԱԾ ԽԱՂԵՐ (արթնցնել մանուկներու մէջ սորվելու հետաքրքրութիւն և սէր)։

Ա.— Դասարանական խաղեր խաղալիկներով. Պուպրիկներ (սորվեցնել խաղալով, գլուխ, իրան, ոտք, ձեռքեր, մազ, աչք, բերան, զգեստի մասեր և այլն)։ Ընտանեկան անօթներ իբր խաղալիկ. (աթոռ, բազկաթոռ, սեղան, պահարան, անկողին և լն. տան կահք, ապա խոհանոցի առարկաներ)։ Փայտէ կենդանիներ. (իրենց շարունակ տեսած կենդանիներէն սկսելով, շուն, կատու, ձի, էշ, ոչխար, կով և այլն,) ու սորվեցնել

անոնց մարմնամասերը խաղալով, անոնց ձայները, անոնց օդուտը միշտ խաղալով։ Աւազի խաղեր. բահով, կոնքով եւայլն։

Պզտիկ եւ գուճաւոր գնդակներով, աղիւսներով, կոնիներով եւ փայտե ձողիկներով խաղեր. խաղալով տալ ուղիղ դիծի, քառակուսիի, եռանկիւնի եւայլն գաղափար, գոյներու գաղափար. շինել այս առարկաներով տուներ, սենեակներ եւայլն, զարդացնելով մանկան մէջ դիտելու ենմանցնելու կարողութիւնը։

Բ.— Դասարանական խաղեր առանց խաղալիկի. նմանողութեան շարժուձեւեր ու մարզանք (Gestes d'imitation) գլխաւորաբար գլխու, ձեռքերու և իրանի, սորվեցնել ուղիղ կանգնիլ, գլուխը աջ ու ձախ, առաջ և ետև շարժել, թեւերու շարժումներ առջև ետև, վեր վար եւայլն, իրանը առջև ետև, ձախ և աջ դարձնել, ըստ շուէտական տարրական մարզանքի։ Նմանողութեան այլ շնորհալի շարժումներ։

Գ.— Բակի կամ գաւիթի խաղեր խաղալիկներով. Դոյլ և աւազ, ձեռնասայլ, գնդակ, գիցեր եւայլն։

Դ.— Բակի կամ գաւիթի հաւաքական խաղեր.

1) Առանց խաղալիկի, նման ֆրանսական Chat perché-ի Անուտխրատուի. (տե՛ս «Արեւելեան Խաղաշխարհ» էջ 121, 90րդ խաղ, Զիթունի։)

2) Երգով խաղեր, Chat et souris, Մուկ կատու, (տե՛ս «Արև. Խաղ.» էջ 157 113րդ խաղ)։

3) Մնջկատակեալ (շարժուձեւով) խաղեր Pont d'Avignon («Արև. Խաղ.», էջ 117, 86րդ խաղ)։

4) Երջաշարժումներ և շրջապարեր, նախ՝ իրարու ետևէ քալել ոտքի համաչափ շարժումներով և ուղիղ կեցուածքով ու գիծով, ապա վազելով, ապա շրջանակի

քալել և վազել՝ ապա շրջպար համաչափ և ներդաշնակ շարժումներով:

5) Երգեր, ունկնդրել տալ տղայոց նախ ուսուցչուհիին և ապա մանկապարտէզի տղայոց երգերը, և ապա սորվեցնել ամենապարզ դիւրամատչելի և կարճ միաձայն երգեր, անոնց բառերը և իմաստը տղայոց նախապէս բացատրելէն և հասկցնելէն ետքը և ապա մարզանք ընել երգախառն խաղերով. կատարել տալ երգին մէջ յիշուած շարժումները։ Մեծ ուշադրութիւն դարձնել ներդաշնակութեան և ձայնի մարզանքին վրայ։

ՁԵՌԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ

1. Թելի վրայ կեղծ մարգարիտներ կամ ուլունք ելն. անցնել և շարել (Enfilage de perles)։ 2. Խզրատում (déchiquetage), ծաղիկներ շինել թղթով ելն։ 3. Կաղապարում (modelage)։ 4. Թելատում (parfilage)։ 5. Խօթկար (piquage)։ 6. Հիւսել (tressage)։ 7. Շղթայարկում խցանի (chaînette au bouchon) ելն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բարոյական կրթութիւնը կ'ակի ընդհանուր կարգապահութեան կազմակերպութեամբ այնպիսի ձևով մը, որ տղաքը պարապ չմնան և չձանձրանան, ընդհակառակը, անոնց զուարթ տրամադրութիւնը և բարի կամեցողութիւնը միշտ վառ պահելով։ Ուսուցիչը պէտք է առաջին օրէն հոգ տանի տղաքը բարի և օգտակար սովորութիւններու վարժեցնելու, անոնց սէրը և վստահութիւնը գրաւելու և անոնց մէջ ներդաշնակութիւն պահելու արդարութեամբ։ Առանց մասնաւոր դասի ձև տալու ուսուցիչը պարտաւոր է անոնց առող-

ջապահական պարզ խրատներ տալու յարմար առիթներով: Գործնական բարոյական կրթութիւնը կ'սկսի անհատական և հաւաքական խաղերով (վարժեցում իրարօգնութեան), ընտանեկան մարզանքներով՝(անձնական խնամք, ընտանեկան հոգածութիւն, հայր, մայր, եղբայր, քոյր,) ընտանեկան խնայողական սընտուկներով, ուր տղաք կը հաւաքեն դերձան, ասեղ, կոճակ և այլն և խնայողութեան և պարզութեան վարժութեամբ:

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Leçons de choses)

Դիտել տալ նախ դասարանը և անոր պատերն ու մէջը գտնուած առարկաները, այսպէս դպրոցին բակը, պարտէզը, փողոցը: Դիտել և խորհրդածել դպրոցական առարկաներու և խաղալիկներու մասին տարրական ծանօթութիւններ տալով անոնց ամենէն բնորոշ յատկութիւններու վրայ: Ուսուցիչը մասնաւոր ուշադրութեամբ պէտք է մշակէ աշակերտներուն դիտելու, շօշափելու, լսելու, հոտոտելու և ճաշակելու, զգայարանական կարողութիւնները և ապա նմանելու, հարցընելու և պատասխանելու ունակութիւնները: Սովորական առարկաներ պէտք է դրուին անոնց առջև և տրուին անոնց ձեռքը, որպէս զի անոնք միւս տղայոց առջև այդ առարկաները գործածեն. ի հարկին անոնց օգնութեամբ, անոր անունը և գործածութիւնը սորվելու համար:

Փայտաշէն կենդանիներու և ընտանեկան այլ կենդանիներու կեանքէն պատկերներ և դիւրըմբռնելի ասասարաններ, որոնք անոնց էական յատկութիւնները կը պարզեն:

ԼԵԶՈՒ

Արտասանութեան վարժութիւններ բառերու, նախադասութիւններու և դիւրահասկնալի կարճ ու հետաքրքրական պարբերութիւններու նախ պատկերներու օգնութեամբ և ապա յիշողութեամբ։

ՀԱՇԻՒ

Բազմատեսակ առարկաներով՝ գնդակ, աղիս, ձողիկ և այլն մարզանք նախ՝ 1—5 հաշուելու և դումարելու ու հանելու և ապա 1—10 նոյն ձևով։

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

Նախ ազատ գծագրութիւն մատիտով, ապա ստուերաձևեր (silhouettes) և տողաշարում (alignement) աղիւսներու, խորանարդներու, ցիցերու, կաւարներու (բարակ խաւ, շերտ) խճաքարերու, կոճակներու և ն. միջոցով. փորձել այս ձևերը քարեսախտակի վրայ գծելու։ Կէտանիշով թուղթերու վրայ ուղիղ գիծեր և անոնց միացումը և պարզ զարդանկարներ։

Ոևէ ընթերցանութեան վարժութիւն չընել։

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

(5—6 տարեկան տղայոց համար)

ԽԱՂ ԵՒ ԵՐԳ

ԱԶԱՏ ԵՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԱԾ ԽԱՂԵՐ

Ա.— Դասարանական խաղեր խաղալիկներով, ինչպէս վերև, ասկից զատ osselets (վիգախաղ), bilboquets à cornets (փայտագնդակ), lotos (վիճակախաղ), patiences և այլն (տես նման խաղեր «Արևելեան Խաղաշխարհ»)

Բ.— Դասարանական խաղեր առանց խաղալիկի. ֆրանսական Pigeon vole ի պէս։

Գ.— Բակի կամ գաւիթի խաղեր խաղալիկներով. սանտալներով (sabots), չուաններով, շրջանակներով, (passe boules) և այլն։

Դ.— Բակի կամ գաւիթի խաղեր առանց խաղալիկի
1) առանց խաղալիկի, նման ֆրանսական cloche pied, marelle (ակնառոտիկ, էջ 89 խաղ. 65, կամ կուչառոտիկ տես էջ 13, խաղ 98):
2) Երգով խաղեր, la marjolaine։
3) Մնջկատակով և շարժուններով խաղեր։

Ե.— Մարմնամարզ, քալել կարգով, երկնակ, երբնակ, քառնակ և այլն շարքեր կազմել. խմբովին մարզանք, պարզ պարաքայլերով՝ ինչպէս ֆրանսական (Scènes Dalcraze), շուէտական մարզանք։

Զ.— Երգ, միաձայն խմբերգ միմիայն ունկնդրութեամբ ջութակի կամ դաշնակի և այլն մասնակցութեամբ ուսուցանել, միշտ նախապէս երգին բառերն ու իմաստը բացատրելէն և հասկցնելէն ետքը։

ՁԵՌԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ

1. Շարունակել Ծաղկոցի վարժութիւնները։ 2. Ասեղնագործութիւն canevasի (հասակաւ) կամ թուղթի, (բամպակ կամ ուրաֆիա) վրայ։ 3. պարզ ձևքեր խաչաքարտով կամ յարդով, (տուփ, սակառ, շրջանակներ և այլն.)։ 4. Կռասեղով (crochet) փայտասեղով (fourche) և այլն պարզ վարժութիւններ։ 5. Նրմանագործութիւն տեղական պարզ աշխատանքներու և գործածութիւն տեղական նիւթերու։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Մաղկոցի մէջ եղածին պէս հետզհետէ աւելի զբաղեցնել մանուկները իրարու հետ (մեծերուն սորվեցնել խնամել ու հոգալ փոքրերը) և անոնց յանձնել պզտիկ պատասխանատու գործեր (գասարանի և դպրոցի կարգապահութիւն, մաքրութիւն և այլն): Մեծերուն յանձնել փոքրերուն հսկողութիւնը,

Դպրոցի կամ անոր պարտէզի բոյսերուն խնամքը։ եթէ դպրոցին բակը կամ շրջաբակը կը ներեն պահել քանի մը անվնաս կենդանիներ առանց հոտի, ինչպէս կրեայ, ձուկ, աղաւնի, ճերմակ մուկեր և այլն և վարժեցնել զանոնք խնամել:

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1) Ազատ և ղեկավարուած զգայարանական կարողութեանց մարզանք, գլուխ, իրան, ոտք և ձեռքեր, պարզելով մարմնի գլխաւոր մասերը և անոնց պաշտօնները և 5 զգայարանները և ն. ։ 2) Սրել ու նրբացնել զգայարանական կարողութիւնները. գոյներ և անոնց տարբերութիւններն ու նրբութիւնները, ձևեր և տարածութիւններ, ծանրութիւն (կշիռ), ձայն կամ հնչիւն, հոտ և այլն։ 3) Իրական առարկաներով և կամ պատկերներով տարրական ծանօթութիւններ տալ ըզգեստի, կերակուրի, բնակարանի, աշխատանքի տեսակներու մասին։ 4) Ընտանի և վայրի կենդանիներու բարքերու մասին տարրական և դիւրամատչելի ծանօթութիւններ տալ միշտ պատկերներու օգտագործումով, առանց միմիայն մարդուն օգտակարութեան տեսակէտը նկատի առնելով։ 5) Սորվեցնել մանուկ-

ներուն ծանոթ ընտանի կենդանիներու տարուած իրանամքը։ 6) Սորվեցնել միջավայրին մէջ սննդեղէնի համար գործածուած բանջարեղէններու և զարդի համար գործածուած ծաղիկներու անունները։ (Բակին, փողոցին ծառերը և պարտէզին գործածական ծաղիկները։ 7) Ամենօրեայ և ուղղակի դիտողութեամբ սորվեցնել եղանակները, անոնց յառաջ բերած բնական մեծ երեւոյթները, անոնց արտադրութիւնները և այն։ 8) Դասարանին և դպրոցին դիրքը գտնուած թաղին մէջ, աշխարհագրական տարրական ծանօթութիւններ աւագի վրայ գծելով։

Ա. ԵԶՈՒ

1.— Շարունակութիւն ծաղկոցի վարժութեանց։

2.— Խաղեր հարցումներով և պատասխաններով։

3.— Շարժուձևերով բայերու իմաստ արտադրել, ներանացի գործածութիւն բայերու, ժամանակներու (երէկ, այսօր, վաղը և այն)։

4.— Ուսուցչին կողմէ պարզ և կարճ պատմուածքներ և ընթերցանութիւններ և անոնց մասին խօսակցութիւն տղոց հետ։

5.— Նախնական վարժութիւնք գրի, նախնական վարժութիւնք ընթերցանութեան, և որչափ կարելի է շուտ ամենօրեայ արտագրութիւն ընթերցանութեան մէկ պարբերութեան, գրուած գրատախտակի վրայ։

Հ. ԱՇԻՒ

1.— Զանազան առարկաներով կազմել 10, 20, 30, 40, մինչև 50, տասնեակներու խումբեր, և ապա ամբող-

ջի մը կէսի, երրորդի, չորրորդի մասին գաղափար տար։

2.— Մտաւոր կամ բերանացի պարզ հաշիւներ, գումարում, հանում, բազմապատկութիւն և բաժանում հետզհետէ 1—50 թիւերով։

3.— 1—50 թիւերու դրութեան ուսուցում և անոնցմով գրաւոր պարզ հաշիւներ չորս գործողութեամբ։ Ապա 1—100 ով կատարել նոյն վարժութիւնները։

4.— Վարժութիւններ և խաղեր, մեթրով, կանգունով, սուրիական ղրուշով, ոսկիով, քաշով, (կշիռ, քաշ, կէս քաշ, նիւկի կամ once։) եւայլն

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Շաբաթը անգամ մը ազատ գծագրութիւն մատիտով, տետրակի մէջ, տեսնելու համար կատարուած յառաջդիմութիւնը։ 2. Արտահանում (décalquage de feuilles) պատկերներու։ 3. Սուլուերագիծեր (silhouettes) եզրազարդեր (bordures), վարդաձևեր խումբով (rosaces) և տողանցում (alignement des objets) առարկաներու։ 4. Այս վերջին ձևերու ոև կամ գունաւոր արտագծում քարեստախտակի և կամ թուղթի վրայ։ 5. Պարզ, համաչափ գծագրութիւններ քառակուսի գրծաւոր թուղթի վրայ, անոնց խոթծակումը, (piquage և սեղնագործումը։ 6. Ամենապարզ առարկաներու արտագծում (copie)։ Ամէն տեսակի պարզ ուրուագծում (croquis)։

ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՒՑՈՑՆ ԼԻԲԱՆԱՆԻ

Ատենադպիր Ատենապետ

Վ. ՈՒԶՈՒՆԵԱՆ ՏՓԹ. Ց. ԹՕՓՃԵԱՆ

Պէյրութ 930

ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	2	տող	6	կրթական պէտք է ըլլայ կրթութեան
»	3	»	1	խաղալով բառը աւելորդ է
»	7	»	7–8	cloche pied պէտք է ըլլայ Cloche-pied
»	7	»	15	Daleraze պէտք է ըլլայ Daleroze
»	7	»	17	ունկնդրութեամբ և ջութակի բառերուն մէջ և ը կը պակսի
»	8	»	2	մանուկներու պէտք է ըլլայ մանուկները
»	8	»	7	խնամքը բառէն ետքը վերջակէտին տեղ միջակէտ
»	8	»	6	հակոդութիւնը բառէն ետքը ստորակէտի տեղ վերջակէտ
»	8	»	11	վերջակէտէն ետքը աւելցնել՝ պատահական առողջապահական խորհուրդներ։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0319251

ЦЕНА
Тпг
796